

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Բ. ՄԱՏԵԱՆԻ ՌԻԹՄԱԿԱՆ ԵՒ ՏԱՂԱԶԱՓԱԿԱՆ ԲՆՈՅԹԸ

Բանաստեղծական տողը ռիթմի հիմնական միատրոն է: Տողի չափը ծնունդ է բանաստեղծի յուզական տրամադրությունից՝ մտայնացրած բովանդակությամբ համապատասխան: Թեև չափը եւ ռիթմը պայմանավորում են միմեանցով, բայց ռիթմն աւելի շատ տարրեր է պարունակում, քան չափը: Այնպես միեւնոյն չափով չէին գրուի երգ ու շարական, տաղ ու ներբող, գանձ ու մեղեդի, ռոդ ու եղբարություն, առակ եւ քառյակ, որոնք ունեն ռիթմական ուրոյն երանգներ:

Մատենանը գրուած է բովանդակութեանը համարժէք ռիթմական կատարելութեամբ: Տողի տաղաչափական փոփոխութիւնը միշտ համահնչիւն է բանաստեղծի յուզական ապրումներին: Մատենանում իշխում է հնգապանկ անդամներով ազատ ռոտանաւորը: Այդ չափով սկսւում է նոյն չափով էլ աւարտւում է Մատենանը այսպէս՝

*Ձայն հառաչանաց / հեծութեան
ողորոց / սրտից աղաղակի
Քեզ վերընծայեմ / տեսողդ
գաղտնեաց...*

(Բան Ա, ա)

*Արեգակն արդար /, նառագայթ
աւրինեայ,*

*Լուսոյ կերպարան / փափագ
անձկութեան...*

(Բան ՂԵ, ա)

Տաղաչափական այս ընդհանրությունը վարպետօրէն գուգորդուած է ռիթմական հնչերանգին: Տողերի մէջ վանկերի անհաւասարութեան դէպքում ռիթմը պահպանւում է անդամների կանոնաւոր կրկնութեան շնորհիւ: Ե-ավանկ անդամներով տողը կարող է հանդէս գալ

ամենատարբեր ձեւերով. եւ իբրեւ կանոնաւոր, համաչափ, հաւասարատող ռոտանաւոր, եւ իբրեւ խառն, կարճ ու երկար տողերով, եւ անյանգ, եւ յանգաւոր: Յայտնի է, որ Ե-ավանկ անդամներով ռոտանաւորը ամենատարածուած չափն է հայոց բանաստեղծութեան մէջ մինչեւ այսօր: Թէ ինչպիսի կանոնաւորութեամբ է Նարեկացին գործածել այս չափը, բերեմ մէկ օրինակ՝

*Ջայս նմանութիւն աւաղականաց՝
բազմաւք կրկնեցից,*

*Որ ամաւոյն դառն պատուհաս
պահեալ կայ հիփոյս,*

*Կրնումն ատամանց եւ անկէտ
լալումն՝ աչաց եղկելոյս,*

*Հայրական ցասումն անսպուծելի՝
դառնութեան որդոյս,*

*Ապականութիւն աննորոգելի՝
մեղուցեալ մարմնոյս,*

*Նոր կշտամբութիւն գտողիս
չարեաց՝ ախտացեալ հոգւոյս,*

*Տարտամ տագնապի
տարակուսանաց՝ ելից գերելոյս,*

*Ջոր երկնային զաւրջըն
մատուցանեն թշուառացելոյս՝*

*Ի խորձուս որումանցն վկայելով
վտանգեցելոյս,*

*Ի Ձայն ահարկու զանրժկութիւնն
ազդել լիելոյս:*

(Բան ԱԹ, ք)

Մատենի յանգաւորուած հատուածները իբրեւ կանոն ունեն կանոնաւոր տաղաչափութիւն: Կանոնաւոր տաղաչափութեամբ են գրուած նաեւ անյանգ շատ մասեր, բայց, ինչպէս ասուեց, Մատենանը հիմնականում գրուած է ազատ ռոտանաւորով: Համաչափ յաջորդականութեամբ

կրկնուող չափական միաւորների փոխարէն ազատ ռտանաւորի մէջ հերքագայում են անկանոն միաւորներ, որոնց համար չափական կարգաւորութեան հիմք է դառնում շարահիւսական միաւորը: Տողը ենթարկոււմ է իմաստային եւ արտասանական ռիթմաւորման: Աւելորդ է դառնում կանոնաւոր չափը, վերանում է յանգի անհրաժեշտութիւնը, խօսքն աւելի է մօտենում լեզուի քնական տարեքին: Տողերն իրար նկատմամբ հանդէս են գալիս համագոր ինքնուրոյնութեամբ եւ անկախութեամբ: Նրանք ունեն յստակ աւարտ եւ որոշակի դադար: Ահա, օրինակ՝

Եւ արդ, ո՛չ յաստուածուստ
ամենաբարի գանձուցդ՝ չարիս,

Եւ ո՛չ ի լուսոյդ ճշուլից՝ խաւար,
Եւ ո՛չ յապաւինութենէդ՝
գայթակղութիւն,

Այլ ես ինձէ՛ն կորստեան որդիս
գտի գայտսսիկ:

Մեղա՛նք անարէնութեան իմոյ
գանձեցին,

Նիւթեցին գայսքանեաց
բարկութեան մթերս:

(Բան ԺԹ, դ)

Կամ՝

Լայնատարր հետովք խաբեցայ
կենացն անձկալեաց հասանել,

Փակեցի ինձէ՛ն գելիցն
ուղեւորութիւն,

Բացի կամաւ գկորստեան
խորխորատն,

Խցի գպատուհան լսելեացս իմոց՝
առ բանիդ կենաց ընդունելութիւն,

Կափուցի գաչաց հոգւոյս
հայեցուած՝ առ ի գկենացն դեղ նկատել:

Ո՛չ ընդոստեայ ի թմրութեանց
լքմանէ մտացս՝

Ի պատգամ փողոյդ
ահաւորութեան,

Ո՛չ զգաստացայ ի բողոք գուծի
հրափորձական աւուրն ընտրութեան,

Ո՛չ երբեք գարթեայ ի նիրհմանէ
բնոյն մահացուի,

Որ ի կորուստն կարապետէ:

Ո՛չ ետու հանգիստ քո Հոգւոյդ ի
մարմնեղէնս տաղաւարի,

Ո՛չ ընդ բնութիւն շնչոյս
խառնեցի գմասն շնորհաց բումդ
պարգեւի,

Իմոյս ձեռաւ կոչեցի կորուստ,
ըստ առակողին,

Ջողգիս կենդանի մահացուցանել:
(Բան Ե, գ)

Մի քանի տողեր կարելի է տալ այլ տողատմամբ՝ իբրեւ մէկ տող, օրինակ՝ «Ո՛չ ընդոստեայ ի թմրութեանց լքմանէ մտացս՝ ի պատգամ փողոյդ ահաւորութեան», եւ շարահիւսական միաւորի աւարտունութիւնը եւ արտասանական ինքնուրոյնութիւնը կը լինէին կատարեալ: Ի հարկէ, հարեան տողերը կարող են ունենալ նաեւ հաւասար վանկեր, բայց տարբեր ուղիք, որոնց հետեւանձնով էլ կը փոխուի թէ տողի ներքին կառուցուածքը եւ թէ՛ ռիթմը: Նարեկացու տաղաչափական համակարգի մէջ տողերի երկարութիւնը հիմնականում պայմանաւորուած է արտասանութեան ժամանակի համաձայն՝ ըստ ամանակի: Սա ամենից առաջ վերաբերում է ազատ ռտանաւորով գրուած հաստուածներին, մինչդեռ յանգաւոր հաստուածները, տաղաչափական ձեւերի իրենց քաղաքականութեամբ համդերձ, ձգտում են տողերի ներսում վանկերի թուի հաւասարութեան: Մատեանն ունի բարդ եւ հարուստ տաղաչափութիւն: Հինգ վանկանի մէկ անդամով տողից սկսած՝ Նարեկացին ստեղծել է մինչեւ 20, ու մինչեւ իսկ, 25 վանկանի տողեր՝ քաղկացած չորս, սակաւադէպ եւ՝ հինգ անդամներից, ճանի որ յանգն օժտուած է տողերի սահմանագատման յատկանիշով, Մատեանի տաղաչափական այդ քաղաքականութիւնը ցոյց տալու համար ստորեւ տալիս եմ օրինակներ յանգաւոր հաստուածներից:

5-վանկանի / 5 / մէկ անդամով՝
Ումն եւ ճիրանք իւր,

Ումն եւ մատուցեմ իւր...

(Բան 2, գ)

10-վանկանի / 5+5 / երկանդամ՝

Ո՞վ ո՞ք գազրացաւ եւ ոչ

ամաչեաց,

Ո՞վ ո՞ք գարշեցաւ եւ ոչ

պատկառեաց...

(Բան ԻԹ, ք)

15-վանկանի / 5+5+5 / եռանդամ՝

Ահա զոր ունիմ արծաթ անպիտան՝ ոչ երբեք յարգի,

եւ ոչ ընդունի եւ կամ համարարի ի գանձ տերունի:

(Բան ԻԶ, ք)

20-վանկանի / 5+5+5+5 / քառանդամ՝

Ընդէ՛ր զինեցար ընդդէմ քո ներհակ, ո՞վ ընդունարան խելագարութեան,

Ընդէ՛ր որսացար ի ծուղակ մահու՝ թողեալ գարահետն վստահութեան:

(Բան ԽԶ, գ)

Անշուշտ, Մատեանում կան մահւ 20-վանկանի տողերից անելի երկար տողեր: Բայց, մախ, դրանք սակաւադէպ են եւ, երկրորդ, իբրեւ կանոն՝ Նարեկացին անդամներից մէկը կազմում է երկվանկ կամ եռվանկ բառով, յաճախ՝ իբրեւ կոչական, եւ տողը ստանում է ուրոյն ռիթմ: Սա Նարեկացու տաղաչափական մախսախրութիւններից մէկն է, որ տողի մէջ՝ սկսած երկանդամ կառուցուածքով տողից, խախտելով վանկերի հաւասար թիւը, պարբերական անհամաչափութեամբ ստեղծում է ռիթմիկ կանոնաւորութիւն:

6-վանկանի չափը Նարեկացին գործածել է քէ իբրեւ կարճ տող 2+4, 4+2, 6+6 կառուցուածքով եւ քէ իբրեւ երկար տողի մէկ անդամ: Ահա օրինակ՝

Ո՛չ ցուցեալ է երբեք, եթէ աղաչեաց գգեց

Ի ձեռն աւագակաց սրոյ խողխողեալն,

Քանզի կարկամեալ էր.

Ո՛չ ձայն պաղատանաց զկնի արձակեաց,

Քանզի անկուինչ էր.

Ո՛չ մատամբքն տատանելոց գաղէտս վտանգին յայտնեաց տեսողիդ,

Քանզի խորտակեալ էր:

(Բան ԺԴ, ք)

Կամ՝

Ո՛չ տատանմունք մատանց, ոչ համարարմունք ձեռաց,

Ո՛չ պաղատանք շրթանց, ոչ աղաչանք լեզուաց...

(Բան Խ, ք)

Այլ տողատմամբ՝ սա կը լինէր 6-վանկանի ռոտանաւոր՝ 4+2 չափով: Անապետեան ռաբբիով 6-վանկանի ռոտանաւորը / 6+6 / կարող է հանդէս գալ մահւ մէկ ռաբբի յաւելմամբ իբրեւ 9 վանկանի / 6+6+6 /, երկու ռաբբի յաւելմամբ՝ իբրեւ 12 վանկանի / 6+6+6+6 /: Տողի մէջ փոխում է միայն ռաբբիի թիւը.

Մաքրեսցես ի հաղորդ գծածկարան անկողնոյս,

Պահեսցես քո կամաւէդ գտառապեալ անձն ոգւոյս...

(Բան ԺԲ, գ)

7-վանկանի ռոտանաւորը հիմնականում հանդէս է գալիս 4+6, 6+4, 5+2, եւ 2+5 կառուցուածքներով: Այսպէս՝

4+6

Ով անհամարող յիմաստոնց,

Ով անմահուրդ յընտրելոց...

(Բան Ը, ք)

6+4

Մի՛ տանջեր զչարչարեալս,

Մի՛ գաներ զհարուածեալս...

(Բան ԺԵ, ա)

5+2

Եթէ լիանիմք՝ տրտմիս,

Եթէ արհանամք՝ խնդաս...

(Բան ԾԱ, ք)

2+5

Գնամք, եւ ոչ զգոշանամք,

Գերիմք, եւ ոչ եւս զգամք...

(Բան ԾԵ, գ)

4+4 չափով 8-վանկանի, մէկ անդամի յաւելմամբ՝ 12-վանկանի եւ երկու անդամի յաւելմամբ՝ 16-վանկանի ռոտանաւորը եւ հնուց ի վեր լայն կիրառութիւն է ունեցել հայոց բանաստեղծութեան մէջ։ Նարեկացիին եւս յաճախ է դիմել այդ չափերին։

8-վանկանի / 4+4 / երկանդամ՝
Ոչ պատճառս յաւդես մահու,
Այլ հմարս խնդրես կենաց...

(Բան 2Բ, Ե)

12 վանկանի / 4+4+4 / եռանդամ՝

Այլայլեցցին սուտ կերպարանք կեդ-
ծաւորին,

Սատակեցցին խորիստականացն
խիստ յարձակմունք...

(Բան Դ, գ)

16-վանկանի / 4+4+4+4 / քառանդամ՝

Բարաւորութիւն՝ ի չարութեան,
պարկեշտութիւն՝ ի լկտութեան,

Ողորմութիւն՝ յանգքութեան,
ապաշտամք՝ յանյուսութեան...

(Բան ԼԱ, գ)

Վերջինս կարելի էր տալ նաեւ այլ տողատմամբ՝ իրրեւ 8-վանկանի / 4+4 / ռոտանաւոր, մանաւանդ որ ներքին յանգի առկայութիւնը թոյլ է տալիս այդ հնարաւորութիւնը։ Այսպէս՝

Միամտութիւն՝ ի մանկութեան,

Անթոնութիւն յայլամտութեան...

(Բան ԼԱ, գ)

Սակաւադէպ է 20-վանկանի քառավանկ հնգանդամ / 4/+4/+4/+4/+4/+4 / չափը։ Եթէ նկատի ունենանք, որ ք' 12, 16 եւ ք' 20-վանկանի տողերում յաճախ կարող են լինել եռավանկ մէկ կամ երկու ռտֆերով անդամներ, ապա պէտք է ասել, որ այդ չափերով ռոտանաւորները կարելի

է դիտել նաեւ իրրեւ այլ կառուցումով արտայայտութիւն։ Եթէ 6/4/4/4 կառուցումով ռոտանաւորի եռավանկ ոտքը ամանակով քառավանկ չդառնայ, ռոտանաւորը կը դառնայ 15-վանկանի.

Աւտարին կողմն կանգնեալ, եւ
ստացողին պարգեւ մատնեալ...

(Բան Դ, ա)

Հետաքրքիր է 15-վանկանի չափը։ Աստուծոյ, որ այն հանդէս է գալիս հնգավանկ եռանդամ 5+5+5, այսպէս.

Ընկալցիմ ի քէն մասն
Երանութեան պարտոց ազատութեան՝

Հաստեալ վերստին
յանարատութիւն նորոգ մահրութեան,

Նկարեալ դարձեալ զժողդ
կերպարան անփոփոխելի։

(Բան Դ, Ե)

Այս չափը, սակայն, Նարեկացիին աւելի յաճախ գործածել է 7-8 եւ 8-7 կիսատողերով։ 7-8 2+3+2 // 3+2+3 / չափը հայրենի անթերի չափն է, որի առաջին կիրառութիւնը, ինչպէս ասել ենք, տուել է Նարեկացիին։ Մատենանի 26րդ գլխի յանգաւոր մի հատուածը Արեղեանի կարծիքով գրուած է այդ չափով եւ ի յանգով։ (1) Հատուածի տաղաչափական բնութեանն աւելի հանգամանօրէն անդրադարձել է Ռ. Պապայեանը։ Նա չի ընդունում Արեղեանի տեսակէտը։ Ըստ Պապայեանի՝ հատուածը գրուած է 5 եւ 4-վանկանի անդամներով՝ իրրեւ 5+5+5 եռանդամ 15-վանկանի ռոտանաւոր։ (2) Իմ կարծիքով՝ այդ հատուածն ամբողջութեամբ հայրենի չափին վերագրելը նոյնքան անընդունելի է, որքան եւ 15-վանկանի եռանդամ ռոտանաւոր համարելը։ Այստեղ կան եւ 5+5+5 եռանդամ կառուցումով անթերի տողեր, - «Այլ բեկեալ սրտիւ, - մատանց տատանմամբ, / յոյս առեալ դարձի», - եւ ք' հայրենի անթերի չափով գրուած տողեր՝

Ձդէմ / յերկիր / եղեալ, //
պաղատիմ / մաւրդ / Յիսուսի։

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ